

ԼԵԶԱԿԱՆ ՑԵՂԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համեմատելով մեզ հայտնի լեզուները և նրանց միջև հայտնաբերելով նմանություններ և ընդհանրություններ՝ մենք խոսում ենք կամ լեզվական ցեղակցության կամ էլ լեզվական փոխազդեցությունների մասին: Չի կարելի ժխտել նաև պատահական նմանությունների հնարավորությունը, որոնք թերևս հիմնված են մարդկային ընդհանուր մտածողության և մարդու բնախոսական սահմանափակ հնարավորությունների վրա: Պատահական չէ, որ դեռևս Կազանի լեզվաբանական դպրոցի հիմնադիր Բոդուեն դե Կուրտենեն, խոսելով լեզվական ցեղակցության մասին, տարբերում էր երեք տիպի ցեղակցություն՝ պատմական ցեղակցություն, ցեղակցություն, որը հիմնված է ընդհանուր ենթաշերտով կապված հարակից լեզուների միջև առկա ընդհանրությունների ու նմանությունների վրա և համամարդկային նմանություն, որը կախված չլինելով ինչպես պատմական ցեղակցությունից, այնպես էլ տարածքային շփումներից, հիմնվում էր մարդկանց հոգեբնախոսական ընդհանրությունների վրա¹: Այլ կերպ այն անվանում են նաև տարրական ցեղակցություն, որին հիմնականում վերաբերում են ծայնարկությունները, բնածայնական և մանկական բառերը:

Փորձենք պարզել, թե ի՞նչ է լեզվական ցեղակցությունը, երբ է ծագել այդ գաղափարը և ինչպիսի գարգացում է ապրել:

Առաջին հերթին, հարկ է նշել, որ լեզվական ցեղակցության գաղափարն ի հայտ է եկել միջին դարերում, քանի որ անտիկ շրջանում լեզուների բազմազանությունը ոչ ոքի չէր հետաքրքրում: Այս շրջանի մտածողները՝ հատկապես հույներն ու հռոմեացիները, ուսումնասիրության արժանի էին համարում միայն իրենց լեզուները՝ մնացած բոլորը համարելով

¹ И.А.Бодуэн де Куртене, Проблемы языкового родства. Избранные труды по общему языкознанию, т.1, М.1963, стр.342.

բարբարոսական: Բացի այդ, հին աշխարհում, երբ լեզվաբանությունը որպես գիտություն դեռ կայացած չէր և կրում էր փիլիսոփայության խոր ազդեցությունը, մտածողներին հիմնականում հետաքրքրում էին այնպիսի լեզվափիլիսոփայական հարցեր, ինչպիսիք էին՝ լեզվի ծագման, անվան բնույթի, լեզվում կանոնավարության և անկանոնության գերակայման հարցերը և այլն:

Եվ միայն սկսած միջին դարերից, մի շարք հայտնի մտածողներ, ինչպիսիք էին Յ.Սկալիգերը, Գ.Լայբնիցը, Ս.Լոմոնոսովը համեմատելով իրենց հայտնի լեզուները, մեկը մյուսի հետևից եկան լեզվական ցեղակցության գաղափարին: Հատկապես ուշադրության է արժանի անգլիացի արևելագետ և իրավաբան Վ.Ջոունզի՝ 1786թ. Կալկաթայի Ասիական համայնքում կարդացած զեկույցը, որտեղ նա ցեղակցական կապեր էր գտնում սամսկրիտի, հունարենի, լատիներենի, կելտերենի, գոթերենի և հին պարսկերենի միջև: Բացի արմատների նմանությունից հայտնաբերելով նաև քերականական ձևերի նմանություն՝ նա իրավացիորեն բացառում էր պատահականության հնարավորությունը և այսպիսով խոսում էր լեզուների ցեղակցության, այսինքն՝ մեկ ընդհանուր աղբյուրից ծագած լինելու մասին: Ընդ որում նա ճիշտ էր նկատում նաև, որ այդ աղբյուրը թերևս արդեն գոյություն չունի:

Թեև հիշյալ հեղինակների աշխատությունները հեռու էին լուրջ, գիտական հիմնավորվածությունից, սակայն լավ հիմք և նախադրյալ էին հանդիսանում պատմահամեմատական լեզվաբանության հիմնադրման համար: Ինչևէ, գերմանացի անվանի լեզվաբան Ֆր. Բոպպին էր վիճակված ստեղծելու այն գիտակարգը, որը կոչվեց համեմատական լեզվաբանություն և որտեղ բավարար չափով նյութական ընդհանրությունների հիման վրա ապացուցվում էր տվյալ լեզուների ցեղակցությունն ու արդեն խոսվում այս կամ այն լեզվաընտանիքի մասին: Լեզվաընտանիք, որը բաղկացած էր առանձին խմբերից և ճյուղերից, որոնց համար ենթադրվում էր մեկ միասնական աղբյուրի գոյությունը:

Սակայն ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ լեզվաընտանիքները նույնպես աղբյուրներ են ցուցաբերում միմյանց նկատմամբ, որոնք անկարելի է բացատրել միայն փոխազդեցությունների օգնությամբ: Հետևաբար արդեն XIX դարի վերջին և XX դարի սկզբներին լեզվաընտանիքների միջև առկա

ընդհանրությունները սկսեցին բացատրել կամ լեզվաընտանիքների հեռավոր ցեղակցության (նոստրատիկ ցեղակցություն) կամ էլ լեզուների խառնման և խաչավորման, ընդհանուր ենթաշերտի գաղափարի օգնությամբ: Ինչպես տեսնում ենք, այս երկու ուղիների հիմքում ընկած էին լեզվի զարգացման երկու հիմնական ուղղությունները՝ տարամիտումն ու զուգամիտումը, որոնք էլ ուղիղ համեմատական էին լեզվի բնույթի ըմբռնմանը տվյալ լեզվաբանների կողմից:

Այսպես, ինչպես գիտենք, լեզվաբանության պատմությանը հայտնի են լեզուների ցեղակցական փոխհարաբերությունների երկու հիմնական տեսություններ՝ «ծննդաբանական ծառի»² և «ալիքների»³:

Լեզուների ցեղակցության ծննդաբանական ծառի տեսության հեղինակը՝ գերմանացի անվանի լեզվաբան Ա.Շլայխերը, լեզվաբանությունը դասելով բնական գիտությունների շարքին, լեզուն դիտում էր որպես բնական օրգանիզմ, որն անկախ լինելով մարդկային կամքից, գտնվում էր անընդհատ տարբերակման գործընթացում: Այսինքն՝ այստեղ անտեսվում էր լեզվի հասարակական բնույթը, այն, որ լեզվի զարգացումը կապված է իրեն կրող ժողովրդի կոնկրետ պատմության հետ և պարզապես չի կարող ներկայացվել «ծննդաբանական ծառի» ուղղագիծ գծագրի տեսքով:

Ինչ վերաբերում է Յ.Շմիդտի «ալիքների տեսությանը», որն ի հայտ եկավ որպես «ծննդաբանական ծառի» տեսության քննադատություն, ապա այն ենթադրում էր մի լեզվի հայտնի բնորոշ գծերի աստիճանական անցումը մյուս լեզու ալիքների այն շարժման տեսքով, որն առաջանում էր ջուրը նետած քարի հետևանքով: Հնդեվրոպական լեզուներն, ըստ նրա, պետք էր պատկերացնել ոչ թե մի բնից սերող ճյուղերի տեսքով, այլ տարբեր օղակներով մի փակ շղթայի, որը չունի ոչ սկիզբ, ոչ վերջ: Թեև Շմիդտն ինքը չէր խոսում իր աստիճանական անցումների համար անհրաժեշտ նախադրյալ հանդիսացող լեզվի հաղորդակցման գործառույթի, առավել ևս լեզվի հասարակական բնույթի մասին,

² St'u J. Schleicher, Compendium der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, Weimar, 1866.

³ St'u J. Schmidt, Die Verwandschaftsverhältnisse der indogermanischen Sprachen, Weimar, 1872, S. 26-27.

սակայն վերջինս լավ գիտակցվում էր նրա տեսության շատ կողմնակիցների կողմից: Այսպես օրինակ, ավստրիացի լեզվաբան Յ.Շուխարդտը նույնպես գերապատվությունը տալով լեզվի զուգամետ զարգացմանը՝ լեզվական փոփոխությունների պատճառները համարում էր լեզուների խաչավորումը, ընդ որում, լեզվական խաչավորման պատճառները միշտ ունեին հասարակական բնույթ և ոչ թե ֆիզիոլոգիական, քանզի լեզուն ոչ թե ինքնուրույն օրգանիզմ էր, այլ միայն մարդու գործունեության արդյունք⁴:

Այսպիսով, ի հայտ եկան տեսություններ լեզուների խառնման և փոխադարձ շփումների մասին: Այս դեպքում նմանությունը բացատրվում էր ոչ թե ընդհանուր ծագմամբ, այլ տարբեր համակարգերի մերձեցմամբ: Փաստորեն կասկածի տակ էր առնվում լեզվական ցեղակցության գաղափարը, ինչպես նաև՝ պատմահամեմատական լեզվաբանության գոյության հեռանկարը: Բանն այն է, որ այդ շրջանում՝ XIX դարի վերջին և XX դարի սկզբներին, պատմահամեմատական լեզվաբանությունը, ի դեմս Ժամանակի ներկայացուցիչներ երիտքերականների, կանգնել էր փակուղու առջև. ցեղակից լեզուների միջև առկա տարբերությունները չէին կարողանում բացատրել՝ նույնիսկ հաշվի առնելով բազմաթիվ գործոններ, որոնք մեծ դեր էին խաղում լեզուների զարգացման գործընթացում: Բավականին մեծ թվով զուգահեռներ էին նկատվում նաև տարբեր լեզվաընտանիքների միջև: Սա էր պատճառը, որ Շուխարդտի խառը լեզվի ուսմունքն իր արծազանքը գտավ XX դարի սկզբների լեզվաբանական ամենատարբեր հոսանքներում, որտեղ եթե անգամ լիովին չէր ժխտվում լեզվական ցեղակցության գաղափարը, ապա միայն պայմանականորեն էր ընդունվում: Լեզվական ցեղակցության նկատմամբ նման մոտեցում ունեին Ն.Մառը, Պ.Վ.Շմիդտը, իտալացի նեոլինգվիստները և Ն.Տրուբեցկոյը, որն իր գազաթնակետին հասցրեց լեզվի զուգամետ զարգացումը՝ հանգելով լեզվամիության գաղափարին: Նրանք բոլորն էլ ծայրահեղ վերաբերմունք ունեին լեզվի զուգամետ զարգացման նկատմամբ, որը հիմնականում զուգորդվում էր նրանց կողմից լեզվի տարամետ զարգացման զգալի

⁴ Шухардт Я. В. к вопросу о языковом смешении. Избранные статьи по языкознанию, М., 1950.

թերագնահատմամբ: Դա, իհարկե, ճիշտ չէր, քանի որ, ինչպես հայտնի է, լեզվի զարգացման մշտական դիմամիկան որոշում են զուգամիտումն ու տարամիտումը, որոնց անընդհատ փոխներթափանցմամբ են հիմնականում պայմանավորված լեզվական փոփոխությունները⁵:

Հավասարապես ճիշտ չէր նաև հակառակ միտումը, որը նույնպես բնորոշ էր տվյալ ժամանակաշրջանին, այսինքն՝ երբ լեզվաընտանիքների միջև առկա ընդհանրությունները փորձում էին բացատրել միմիայն նրանց ընդհանուր ծագմամբ՝ ըստ լեզվի տարամետ զարգացման: Այստեղ էլ տեղի էր ունենում լեզվական ցեղակցության գաղափարի ընդլայնում, և ամեն կարգի առնչությունները հանգեցվում էին միայն լեզուների հեռավոր ցեղակցությանը: Գիշտ է, նոստրատիկ տեսության հիմնադիր Դ.Պեդերսենն ինքը զգուշորեն բացառում էր արմատային ստուգաբանությունների ստվար զանգվածի կուտակումն ու կոչ անում սահմանափակվել միայն մի շարք դերանունների, ժխտական ձևերի, մասամբ նաև թվականների ռացիոնալ քննությամբ,⁶ սակայն նրա հետևորդներից շատերը ծայրահեղության էին հասնում իրենց համեմատություններում՝ դրանցում ընդգրկելով ոչ միայն ցեղակցական, այլև ամենատարբեր բնույթի զուգադիպություններ, այդ թվում՝ ինչպես պատահական մամուրություններ, այնպես էլ մշակութային բառեր: Վերջիններս, ինչպես գիտենք, տարածվում են փոխառության ճանապարհով և ավելի շուտ պատկանում են լեզվամիությանը, քան լեզվաընտանիքին⁷:

Հիշենք, օրինակ, նեոնոստրատիզմի հիմնադիր Վ.Ս.Իլիչ-Սվիտիչի այն քսանչորս զուգահեռները, քաղված հիմնականում Դ.Մյուլլերի հայտնի «Հնդեվրոպական և սեմական լեզուների համեմատական բառարանից», որոնք նա, հակառակ Դ.Մյուլլերի, դասում է մշակութային բառերի շարքին՝ բացառելով նրանց միջև ենթադրյալ հեռավոր ցեղակցության հնարավորությունը: Այդպիսին են օրինակ՝ հ.-ե. *tauro «ցուլ»- սեմ. *tawru «ցուլ», հ.-ե. *bh(ə)r(s)

⁵ Դմմտ. X.Бирнбаум, О двух основных направлениях в языковом развитии. ВЯ, 1985,2.

⁶ H.Pedersen, Türkische Lautgesetze, ZDMG, 57, 1903.

⁷ Դմմտ.Языкознание.Большой энциклопедический словарь,М.,1998, стр.617.

«հացահատիկ, ծավար» - սեմ. *b-r-(r) «հացահատիկ, ծեծած հացահատիկ», հ.-ե. *dh^uer «բակ, դուռ» - սեմ. *-t-w-r «ցանկապատ, ցանկապատված բակ» և այլ զուգահեռություններ: Ելնելով այն հանգամանքից, որ այդ բառերից ոչ մեկը չի ստուգաբանվում հնդեվրոպական օրինաչափություններով և նրանցից շատերի արմատի կազմությունը հնդեվրոպական չէ՝ Իլիչ-Սվիտիչը դրանք համարում է սեմական հնագույն փոխառություններ հնդեվրոպական լեզուներում⁸:

Բացի Դ.Սյուլերից, այդ ժամանակաշրջանում լեզուների հեռավոր ցեղակցության գաղափարի ջատագովներից էին նաև Վ.Շոտը, Մ.Կաստրենը, Ա.Տրոմբետին, Ա.Կյունին և այլք, որոնց աշխատությունները զուգահեռների բնույթի տեսակետից նույնպես բացառություն չէին կազմում: Անշուշտ, դա հետևանք էր նաև այն բանի, որ այս շրջանի գիտական մտքին բնորոշ էր հետևողականությունն ու նոստրատիկ նախաձևերի վերականգնումը:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, դեռևս պատմահամեմատական լեզվաբանության սաղմնավորման շրջանում տարբեր լեզվաբանների կողմից հայտնաբերվում էին լեզվաընտանիքների միջև առկա ներքին աղբյուրների վկայություններ, որոնք մեկնաբանվում էին երկու ծայրահեղ, միմյանց բացասող տեսակետներով, այսինքն՝ կամ ընդհանրապես կասկածի տակ էր առնվում լեզվական ցեղակցության գաղափարը կամ էլ ընդլայնվում էին նրա սահմանները:

Այս շրջանի լեզվաբաններին բնորոշ հիմնական թերությունն այն էր, որ նրանք փորձում էին հակադրել լեզվի տարածետ և զուգամետ զարգացումները, և այսպիսով, լեզվական «ցեղակցությունը» հանգեցնել դրանցից որևէ մեկին: Մեր օրերում, սակայն, այդ թերությունը լիովին վերացել է, քանի որ ժամանակակից լեզվաբանությունը հակված չէ հակադրելու լեզվի զարգացման վերոհիշյալ ուղղությունները, այլ ընդհակառակը՝ դրանք դիտում է որպես մեկը մյուսին լրացնող երևույթներ: Պարզապես, պետք է կարողանալ տարբերել լեզվական ցեղակցությունը լեզվական հարակցությունից, նյութական

⁸ St'u B.M.Иллич-Свитыч, Древнейшие индоевропейско-семитские языковые контакты, „Проблемы индоевропейского языкознания“, М., 1964.

ընդհանրությունները՝ փոխազդեցությունների հետևանքով ի հայտ եկած կառուցվածքային ընդհանրություններից: Չի կարելի ենթադրել, սակայն, թե համեմատական լեզվաբանությունն այժմ գերծ է բոլոր տեսակի հակասություններից, ընդհակառակը. լեզվաընտանիքների միջև առկա ներքին աղերսներն այժմ էլ չեն դադարել զբաղեցնել լեզվաբաններին: Եվ եթե լեզուների խաչավորման և խառը լեզվի տեսությունները չկարողացան դիմանալ ժամանակի քննությանը, ապա լեզվաընտանիքների հեռավոր ցեղակցության գաղափարն իր զարգացումն ապրեց, այսպես կոչված, նեոնոստրատիզմի տեսքով և դրվեց ավելի լուրջ հիմքերի վրա: Դա կապված էր նաև այն հանգամանքի հետ, որ պատմահամեմատական լեզվաբանությունը շարունակում էր և դեռևս շարունակում է գերապատվությունը տալ լեզվի տարածետ զարգացմանը: Իհարկե, սա չի նշանակում, թե ընդհանրապես անտեսվում է լեզվի զարգացման մյուս կողմը՝ զուգամիտումը: Ինչպես արդեն նշվեց, դեռևս XX դարի 20-ական թվականներին Պրագայի լեզվաբանական դպրոցի տեսաբան Ն.Տրուբեցկոյը առաջ է քաշում, այսպես կոչված, լեզվամիության գաղափարը, որը չփստելով լեզուների ծագումնաբանական ցեղակցությունը, նրանց միավորում էր աշխարհագրական հարակցության վրա հիմնված խմբակցության մեջ, որի անդամները բնորոշվում էին կառուցվածքային ընդհանուր գծերով⁹: Հետագայում այս դրույթի հիման վրա ձևավորվեց տարածքային (արեալային) լեզվաբանությունը, որն իր մշակվածությամբ, ցավոք, բավականին զիջում է համեմատաբանությանն ու տիպաբանական լեզվաբանությանը: Լեզվի զուգամետ զարգացմամբ էր պայմանավորված նաև XX դարի 60-ական թվականներին խորհրդային լեզվաբան Ծերեթելու առաջարկած, այսպես կոչված, ալլոգենետիկ ցեղակցության՝ բազմակողմանի ծննդաբանական կապի գաղափարը: Ուշագրավ է, որ Ծերեթելին ալլոգենետիկ ցեղակցական կապեր էր հայտնաբերում նաև նոստրատիկ լեզուների միջև¹⁰:

Ինչ վերաբերում է նոստրատիկ ցեղակցությանը, ապա նրա զարգացման գործում մեծ ավանդ ունի խորհրդային լեզվաբան Վ.Մ.Իլիչ-Սվիտիչը:

⁹ Н.С.Трубецкой, Вавилонская башня и смешения языков, в кн. „Евразийский временник“, т.3, Берлин, 1923, стр.114.

¹⁰ Г.Церетели, О языковом родстве и языковых союзах, ВЯ, 1968, 3.

Նրան է պատկանում նյութերի ընդհանրացման և մոստրատիկ նախալեզվի վերականգման առաջին փորձը: Նրա եռահատոր բառարանը, որը կրում է «Նոստրատիկ լեզուների համեմատության փորձ» խորագիրը, ընդգրկում է արդի վեց լեզվաընտանիքների տվյալները՝ հնդեվրոպական, աֆրոասիական, ուրալյան, ալթայան, դրավիդյան և քարթվեական¹¹:

Բացի Վ.Մ.Իլիչ-Սվիտիչից լեզվաընտանիքների հեռավոր ցեղակցությամբ են զբաղվել նաև Ա.Բ.Դոլգոպոլսկին, որն ընդլայնում է մոստրատիկ լեզուների ցանկը՝ ներառելով չուկոտականաչատկյան լեզուներն ու շումերերենը,¹² և Գ.Բ.Ջահուկյանը՝ խոսելով խուռի-ուրարտական և հնդեվրոպական լեզուների հեռավոր ցեղակցության մասին¹³:

Սակայն մոստրատիկ տեսությունը, ինչպես ամեն մի տեսություն, գերծ է քննադատությունից: Եվ թեև դեռևս չի կարելի լիովին հաղթահարված համարել նրա նկատմամբ գոյություն ունեցող քննադատական վերաբերմունքը, այնուամենայնիվ լեզուների հեռավոր ցեղակցության գաղափարը շարունակում է զբաղեցնել լեզվաբաններին և մնալ արդիական: Փաստորեն, խնդիրն ավելի շուտ մեթոդաբանական է քան սկզբունքային, քանի որ մոստրատիկ տեսության քննադատները հիմնականում ոչ թե ընդհանրապես ժխտում են լեզուների հեռավոր ցեղակցության հնարավորությունը, այլ, որպես կանոն, վկայակոչում են կոնկրետ դեպքերի անհավաստիությունն ու տիպաբանական տվյալների անտեսումը: Այսպես, սկզբունքորեն չժխտելով լեզվաընտանիքների հեռավոր ցեղակցության հնարավորությունը, Բ.Սերբերենիկովն ի թիվս մի շարք ասկածելի զուգահեռների, մատնանշում է նաև Իլիչ-Սվիտիչի կողմից կատարված տիպաբանական օրինաչափությունների մի քանի խախտումներ¹⁴: Այդպիսին է օրինակ, մոստրատիկ նախալեզվի հնչյունական համակարգի անբնական լինելը: Հայտնի է, որ Իլիչ-Սվիտիչը ծայնավորների հնչյունական

¹¹ В.М.Иллич-Свитыч, Опыт сравнения ностратических языков, 1-3, М., 1971-1984.

¹² Змдм. А.Б.Долгопольский, Гипотеза древнейшего родства языковых семей Северной Евразии с вероятностной точки зрения, ВЯ, 1964, 2.

¹³ Б. Джаукян, Урартский и индоевропейский языки. Ер., 1963.

¹⁴ Sh'u B.A.Серебренников, Почему трудно верить сторонникам ностратической гипотезы, ВЯ, 1986, 3, стр.36.

համակարգը վերականգնելիս հիմք է ընդունել ուրաշյան և հնդեվրոպական լեզուները, իսկ բաղաձայների հնչյունական համակարգը վերականգնելիս՝ քարթվելական լեզուները: Արդյունքում՝ նոստրատիկ նախալեզուն ձեռք է բերել բավականին մեծ թվով բաղաձայներ և ձայնավորներ: Սակայն, ինչպես գիտենք, լեզվում գոյություն ունի որոշակի փոխադարձ կապ ձայնավորների և բաղաձայների միջև. եթե կտրուկ նվազում է բաղաձայների տարբեր տեսակների քանակը, ապա այդ թերությունը սովորաբար փոխհատուցվում է ձայնավորների տարբեր տեսակների և երկբարբառների քանակի ավելացմամբ:

Սա է պատճառը, որ այժմ նոստրատիկ ցեղակցությամբ զբաղվող լեզվաբանները մեծ ուշադրություն են դարձնում տիպաբանական տվյալներին: Այսպես օրինակ, ամերիկացի լեզվաբան Ա.Բոմհարդը, որը ներկայումս զբաղված է նոստրատիկ լեզուների ցեղակցության խնդրով, շատ է կարևորում տիպաբանական ուսումնասիրությունների տվյալների կիրառումը պատմահամեմատական քննություններում: Հարելով Վ.Իվանով - Թ.Գամկրելիձեի և Ջ.Հոպերի կողմից առաջարկված հնդեվրոպական նախալեզվի պայթականների համակարգի նոր տեսությանը, որը բնորոշվում էր եռանդամ հակադրությամբ՝ «կատկայնացվածներ - խուլեր (շնչեղներ) - ձայնեղներ (շնչեղներ)»՝ նա եզրակացնում է, որ Իլիչ-Սվիտիչը սխալվել է, երբ նախաքարթվելականի և նախաաֆրոասիականի կատկայնացվածները մույնացրել է նախահնդեվրոպականի պարզ խուլերի հետ, վերոհիշյալ երկու լեզվաընտանիքների խուլ պայթականները՝ նախահնդեվրոպականի ձայնեղ պայթականների հետ և վերջապես ձայնեղ պայթականները՝ շնչեղ ձայնեղների հետ: Բանն այն է, որ Իլիչ-Սվիտիչը նոստրատիկ նախալեզուն վերականգնել է նախաաֆրոասիականի և նախաքարթվելականի եռանդամ հակադրության կաղապարով՝ «կատկայնացվածներ - խուլեր - ձայնեղներ»: Արդյունքում՝ կատկայնացվածները նախանոստրատիկ պայթականների համակարգում հանդես են գալիս որպես ամենաքիչ նշույթավորված տարր, որն էլ հակասում է տիպաբանական

տվյալներին, քանի որ կատկայնացված պայթականները, որպես կանոն, հիերարխիայի ամենանշույթավորված անդամներն են¹⁵:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ներկայումս շատ է կարևորվում տիպաբանական ուսումնասիրությունների տվյալների կիրառումը պատմա-համեմատական լեզվաբանության ոլորտում: Լեզուների հեռավոր ցեղակցությանը նվիրված ուսումնասիրություններում տիպաբանական տվյալների կիրառմանը մեծ նշանակություն է տալիս նաև ռուս լեզվաբան Ա.Բ.Դոլգոպոլսկին¹⁶:

Ղա վկայում է այն մասին, որ մեր օրերում լավ է գիտակցվում լեզվաբանության, որպես գիտակարգի, միասնականությունն ու նրա առանձին բաժինների փոխկապակցվածությունը:

Ինչ վերաբերում է լեզվական ցեղակցության հիշյալ խնդիրներին, որոնք վերաբերում են լեզուների հեռավոր ցեղակցությանը, ապա կարծում ենք, որ ժամանակի ընթացքում այդ բոլոր խնդիրները հնարավորինս կհարթվեն՝ այսպիսով նպաստելով ինչպես համեմատաբանության, այնպես էլ տիպաբանական և արեալային լեզվաբանությունների զարգացմանը, քանզի, ինչպես արդեն նշվեց, նրանք գտնվում են սերտ փոխկապակցման մեջ՝ փոխադարձաբար լրացնելով միմյանց:

¹⁵ См А.Р.Бомхард, Очерк сравнительной фонологии так называемых „ностратических“ языков, ВЯ, 1989, 3, стр.5.

¹⁶ См А.Б.Долгопольский, Методы реконструкции общендоевропейского языка и сибироевропейская гипотеза. Этимология, 1964, М.1965.